



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 17 Օգոստոս, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚մ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐՍԱԿԱՆ

**Մեծ ու զարմանալի եւ Քո գործերը, Ամենակալ Տէր Աստուած մեր,
Արդար ու ճշմարիտ եւ ճամբաներդ, Ամենակալ Տէր Աստուած մեր:
Տէ՛ր, ո՛վ չի վախենում Քեզնից, Ո՛վ է, որ չի փառաւորում Քեզ,
Քանի որ Դու ես միայն սուրբ, (2); Միայն սուրբ: (3)**

ԱՂՈԹՔ

Տէ՛ր Աստուած մեր, մենք կը գոհանանք Քեզմէ եւ կը փառաբանենք Քու սուրբ անունդ: Շնորհակալ ենք Քու մեծագործութիւններուդ, ողորմութեանդ ու հաւատարմութեան համար, որ ցոյց կու տաս սերունդէ սերունդ: Ինչպէս Քու ժողովուրդդ անցաւ փորձութիւններու, նեղութիւններու եւ անորոշութեան մէջ, բայց դուն երբեք չլքեցիր զիրենք: Դուն առաջնորդեցիր, պահպանեցիր եւ Քու խոստումներդ հաստատ պահեցիր: Սորվեցո՛ւր մեզի՝ երբ կեանքը դժուար է, չմոռնալ Քու կատարած գործերդ: Երբ մեր աչքերուն առջեւ նանապարհը փակ թուի, օգնէ՛ մեզի վստահիլ Քու առաջնորդութեանդ: Երբ մեր սիրտը վախով լեցուի, յիշեցո՛ւր մեզի, որ Դուն հաւատարիմ ես: Տէ՛ր, պահէ՛ մեզ Քու խօսքիդ մէջ: Տուր մեզի սիրտ, որ կը փնտռէ Քեզ, միտք, որ կը յիշէ Քու օրհնութիւններդ, եւ հոգի, որ ամէն օր Քեզ կը փառաբանէ: Օրհնէ՛ մեր ընտանիքները, մեր զաւակ-ներն ու զաւիհ սերունդները, որպէսզի անոնք եւս նանչնան Քու անունդ, յիշեն Քու սքանչելի գործերդ եւ իրենց կեանքը Քու կամքիդ համաձայն ապրին: Տէ՛ր, օգնէ՛ մեզի ոչ միայն յիշել Քու գործերդ, այլեւ մեր կեանքով վկայել Քու բարութեան մասին: Թող մեր բերանները պատմեն Քու մեծութիւնը, իսկ մեր սրտերը միշտ վստահին Քեզի: Քեզի փառք, պատիւ եւ գոհութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՇԱՐՍԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայրնեցաւ փառն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցոյք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւր եւ ողորմեա:

ՇԱՐՍԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

Ապա Յակոբ Եգիպտոս գնաց,
 Քամի երկրին մէջ իբրեւ պանդուխտ բնակեցաւ:
 Աստուած չափազանց անեցուց իր ժողովուրդը,
 եւ զօրացուց թշնամիներէն աւելի:
 Ապա փոխեց Եգիպտացիներուն զգացումները,
 եւ անոնք սկսաւ իր ժողովուրդը ատել
 եւ նենգութեամբ վարուիլ իր ծառաներուն հետ:
 Ապա Աստուած դրկեց իր ծառան՝ Մովսէսը, եւ իր ընտրեալը՝
 Ահարոնը,
 որոնք իր պատուիրած նշանները ի գործ դրին անոնց մէջ,
 Քամի երկրին մէջ հրաշքներ կատարեցին:
 Խաւար դրկեց եւ երկիրը խաւարի մատնեց,
 բայց անոնք ընդդիմացան իր խօսքին:
 Անոնց ջուրերը արիւնի վերածեց, եւ սատկեցուց անոնց ձուկերը:
 Գորտերով լեցուեցաւ անոնց երկիրը,
 մինչեւ իսկ թագաւորին առանձնասենեակները:
 Աստուած հրամայեց, եւ շանամանն եւ մժղուկներ
 ամբողջ երկիրը լեցուցին:
 Անձրեւի փոխարէն կարկուտ դրկեց,
 կայծակներով բոցավառեց ամբողջ երկիրը:
 Հարուածեց անոնց որթատունկերն ու թզենիները,
 եւ կոտորեց երկրին բոլոր ծառերը:
 Հրամայեց՝ եւ անթիւ-անհամար մարախներ եկաւ, մեծ ու փոքր,
 որոնք կերան անոնց երկրին ամբողջ բուսականութիւնը,
 սպառեցին անոնց հողին ամբողջ բերքը:
 Կոտորեց Եգիպտացիներու բոլոր անդրանիկ գաւակները,
 անոնց ընտանիքներուն առջինեկները:
 Ապա իր ժողովուրդը Եգիպտոսէն դուրս հանեց՝
 արծաթով ու ոսկիով բեռնաւորուած,
 ու անոր ցեղերուն մէջ տկար մարդ չկար:
 Անոնց մեկնումին համար Եգիպտոս ուրախացաւ,
 որովհետեւ անոնց պատնառով ահ ու դողը պատեր էր զիրենք:
 Ցերեկը ամպով պաշտպանեց զանոնք,
 գիշերը՝ կրակով լուսաւորեց:
 Երբոր Մովսէս Տիրոջմէ խնդրեց,
 Տէրը լորամարգիներ դրկեց,
 եւ երկնային հացով լիացուց զանոնք:
 Ժայռը նեղեց՝ եւ ջուր բղխեցաւ,

եւ գետի պէս հոսեցաւ խոպան տարածութեան մէջ:
Տէրը հասած նկատեց ժամանակը իր սրբազան խոստումին,
որ տուեր էր իր ծառային՝ Աբրահամին:
Ուստի Եգիպտոսէն դուրս հանեց իր ժողովուրդը՝
ուրախութեամբ, ցնծութեան երգերով դուրս հանեց իր
ընտրեալները: Քանաանի մէջ բնակող ազգերուն հողամասերը
անոնց տուաւ,
եւ թոյլ տուաւ որ անոնք տիրանան ժողովուրդներու վաստակին,
պայմանաւ որ անոնք իր կանոնները պահեն, եւ գործադրեն իր
օրէնքը:

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ՍԱՂՄՈՍ 105:23-45

ԱՐԴԱՐՆԵՐՈՒ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ - Մաս Բ

Շարունակելով 105 Սաղմոսը, 23-րդ համարէն մինչեւ 45: Կը ներկայացնէ Յակոբի Քամի երկիր եր-թալը: Քամը Նոյի երկրորդ գաւակն է, իսկ Քամի երկրորդ գաւակը Եգիպտոսը: Ուրեմն Քամի երկիրը եր-թալը, Եգիպտոս երթալ: Բնակեցաւ իբրեւ պանդուխտ: Այնքան հեղափոխականօրէն եկեղեցւոյ հայրերը այս պատկերին մէջ կը տեսնեն Քրիստոսի ներկայութիւնը, իջնելով մեղաւոր մարդկութեան մէջ եւ ապրելու այն-տեղ իբրեւ պանդուխտ: Աստուած անեցուց իր ժողովուրդը, բայց Եգիպտացիները սկսան արել եւ նենգութեամբ վարուիլ: Նոյնպէս ալ Աստուած անեցուց Իր ժողովուրդը Սուրբ Հոգիի զօրութեամբ, որ սակայն, աշխարհը արելութեամբ կը նայի: Ինչո՞ւ այս վիճակը: Որպէսզի Աստուծոյ ժողովուրդը զԱստուած փնտռէ: Ապա Աստուած դրկեց Մովսէսն ու Ահարոնը Փառաւոնին, նախապարկերացումը Քրիստոսի եւ Իր աշակերտներուն դէմ յանդիման ըլլալու խաւար աշխարհին: Իսկ կատարուած հարուածները ուրիշ բան չէին եթէ ոչ Աստուծոյ դատաստանին նախաճաշակը Չարին դէմ, եւ այն ինչ որ իբրեւ աստուածներ կը պաշտուէին Եգիպտոսի մէջ: Զինաթափ ընելու այդ ոյժերը, եւ անով ցոյց տալու թէ ով է ճշմարիտ Աստուածը: Այս հար-ուածներու աւարտին, Աստուած հրամայեց Գառնուկի զահագործումը, եւ անոր արեան օգտագործումը, եւ այդ կը խորհրդանշէր Քրիստոս Գառնուկը, եւ Անոր արեամբ ազատագրումը: Ապա Աստուած Իր ժողովուրդը Եգիպտոսէն հանեց, մեղքի երկրէն, եւ զիրենք առաջնորդեց անապարով, ցերեկը ամպով իսկ գիշերը կրակի սիւնով: Աստուածային առաջնորդութեան խորհուրդը, որ հաւաքացեալը կ'առաջնորդուի այս խաւար աշխարհին մէջ, ուր շփոթութեան պահուն կրակէ սիւնը կը լուսաւորէ իսկ ամպը կը պաշտպանէ: Աստուած իրենց լորամարզիները դրկեց, երկնային հացով լիացուց, ժայռը ճեղքեց՝ եւ ջուր բղեցուց: Քրիստոսի ներկայութիւնը երկնային հացին, ժայռը՝ Քրիստոսը, իսկ ջուրը Սուրբ Հոգին: Երբ ժամանակը հասաւ, Աստուած կատարեց Իր արուած խոստումը Իր ծառային՝ Աբրահամին: Իր ժողովուրդը դուրս բերաւ եւ խոս-րացուած երկիր տարաւ, որ խորհրդանշէր է փրկութեան, բայց ոչ միայն որպէս ապահովութիւն, այլ՝ նաեւ կերպարանափոխում, պայմանաւ որ անոնք իր կանոնները պահեն ու գործադրեն:

Պահապան ամենայնի Քրիստոս,
*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*